ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԴԱՇՏԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

30.01. 2018թ
N_27_

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊՐ-Ն Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի մարզպետ,

Ձեզ ենք ներկայացնում Դաշտաքար համայնքի 16.01.2018 թվականի ավագանու թիվ 2 նիստի արձանագրությունը:

Համայնքի ղեկավար Ն. Մալխասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԴԱՇՏԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

2018 թ-ի հունվարի 16-ին, ժամը 11-ին, Դաշտաքար համայնքում տեղի ունեցավ ավագանու թիվ 1 նիստը: Նիստին մասնակցում էին ավագանու անդամներ.

Աբրահամ Աբրահամյան
Լյուդվիգ Այնազյան
Արմեն Աթոյան
Արամ Մալխասյան
Անգին Սարգսյան

Համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ՝ Հ. Հակոբյանը
Նիստը նախագահում էր Համայնքի ղեկավար՝ Ն.Մալխասյանը
Նիստը քարտուղարում էր աշխ. քարտուղար՝ Ա. Վարդանյանը

Օրակարգում՝

1. 2018թ-ի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին հարցը
2. Դաշտաքար համայնքի 2018թ-ի բյուջեի հաստատման մասին հարցը

Դաշտաքարի ավագանին հաստատեց նախագահի կողմից ներկայացված օրակարգը միաձայն

Լսեցին-- 2018թ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին
(զեկուցող՝ Ն. Մալխասյան)

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ, 10- րդ, 11- րդ հոդվածների ավագանին որոշեց՝

ՈՐՈՇՈՒՄ 4

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է հիմնական օբյեկտների համար՝

ա) Մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար տեղական տուրքը սահմանվում է 15000 դրամ;

բ) Սույն կետի "ա" ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

- 201 – ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմնվում է 30000 դրամ:
- 501 –ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմանվում է 50000 դրամ:
- 1001-ից մինչև 3000քմ քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմանվում է 50 000 դրամ:
- 3001-ից ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի շինությունների համար տեղական տուրքը սահմանվում է 100 000 դրամ:

գ. Ոչ հիմնական շենքերի և շինությունների տեղադրման համար՝

- Մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3000 դրամ:
- 20 և ավելի քառակուսի – մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3000դրամ:

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի "ա" ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են

նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝ 5000 դրամ.
4. Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար 200000 դրամ.
5. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 100000 դրամ.
6. Համայնքի վաչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 60000 դրամ.
7. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 20000 դրամ.
8. Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 50000 դրամ.

9. Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հազար երեք հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հազար հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամ.

10. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

11. համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար.

ա. առևտրի օբյեկտների համար՝ 5000 դրամ

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 25000 դրամ

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 դրամ

դ. խաղատների համար՝ 500000 դրամ

ե. շահումով խաղերի համար՝ 250000

զ. վիճակախաղերի համար՝ 100000

12. համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

-մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 դրամ.

-51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 13000 դրամ.

-101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 18000 դրամ.

-201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 դրամ.

-501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 35000 դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ.

-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 դրամ.

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ.

-101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ.

-201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000 դրամ.

-501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 22000 դրամ.

13. համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ.

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ.

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով.

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով:

14. Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 100000 դրամ.

15. համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10000 դրամ.

Տեղական վճարներ

- Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության
- ավարտը փաստագրելու համար մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է 1000 դրամ:
- Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար ՏԻՄ մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է 1000 դրամ:

Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանվում է 1000 դրամ:

Աղբահանության վճարի դրույքաչափը սահմանել համայնքում փաստացի բնակվող յուրաքանչյուր 1 անձի համար ամսական 100 .0 դրամ

Որոշումն անցավ միաձայն.

Աբրահամ Աբրահամյան

Լյուդվիգ Այնազյան

Արմեն Աթոյան

Արամ Մալխասյան

Անգին Սարգսյան

2. Լսեցին ---Համայնքի 2018թ-ի բյուջեի հաստատման մասին հարցը

(զեկ Ն. Մալխասյան)

Տարեսկզբի մնացորդ՝ 17135326,20
Վարչական – 4200949,90
Ֆոնդային - 12934376,30
ա/ վարչական բյուջեի տարեվերջի մնացորդի տեղափոխում ֆոնդային բյուջեի եկամտային մաս- 4200949,90
բ/ ֆոնդային բյուջեի եկամուտը սահմանել- 17135326,20
Ծախսեր

ա/ Կառավարման մարմնի պահպանում	- 5113 – 900,0	հազ. դրամ
	– 5122 - 900,0	հազ. դրամ
բ/ Հանգիստ, մշակույթ, կրոն	– 5112 – 2000,0	հազ. դրամ
	- 5122 – 700,0	հազ. դրամ
	-5134- 160,0	հազ. դրամ
գ/ Նավթամթերք, բնական գազ	- 5112 – 9575,3262	հազ. դրամ
	-5134- 300,0	հազ.դրամ
դ/ Փողոցային լուսավորում	- 5112 - 1000,0	հազ. դրամ
ե/ Ճանապարհ, տրանսպորտ	-5113- 1000,0	հազ. դրամ
զ/ Աշխատանքի հետ կապված ընդ. Բնույթի ծառ.	-5122- 600,0	հազ. դրամ

(Զեկ՝ Ն. Մալխասյան)

Արտահայտվեցին ավագանու անդամներ՝ Ա.Սարգսյանը և Ա.Մալխասյանը
Լսելով զեկուցողին և արտահայտվողների ելույթը՝

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի՝ ավագանին որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ 5

Հաստատել Դաշտաքար համայնքի 2018թ-ի բյուջեն՝
Եկամուտների գծով - 34165326.2

Ծախսերի գծով - 34165326.2

Այդ թվում՝

Վարչական բյուջե՝

Եկամուտների գծով - 17030000,0

Ծախսերի գծով -17030000,0

Ֆոնդային բյուջե՝

Եկամուտների գծով – 17135326.2

Ծախսերի գծով -17135326.2

Որոշումն անցավ միաձայն.

Աբրահամ	Աբրահամյան
Լյուդվիգ	Այնազյան
Արմեն	Աթոյան
Արամ	Մալխասյան
Անգին	Սարգսյան

Ավարտելով հաստատված օրակարգի հարցերի քննարկումները՝ համայնքի ղեկավարը հանդես եկավ հայտարարությամբ և նիստը հայտարարեց փակված:

Համայնքի ղեկավար՝ Ն.Մալխասյան

Աշխ. քարտուղար՝ Ա. Վարդանյան